

## ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԳԵՐԵՉՄԱՆԱՏԱՆ ՄԱՏՈՒԻԸ

Աղեքսանդրիոյ Հայոց գերեզմանատունը ի սկզբան կը գտնուէր ներկայ եկեղեցոյ բակին մէջ, նախկին մատուռին մօտիկը, մէկուկէս արտավար տարածութեամբ հողաբաժինի մը վրայ, որ պարիսպով շրջապատուած էր և բազմաթիւ ծառերով հովանաւոր: Մուտքին աջակողմը մարմարեայ տախտակի մը վրայ կար սա արձանագրութիւնը. «Յիւսէցեք զնոզի մեծանուն Յուսուֆեան Պօղոս Պէյի Զմիւռնիացոյ, բարեբարի Ազգին եւ նորին ի Տէր հանգուցեալ համայն բարեպատէս ընտանեացն. 31 Դեկտ. 1888»: — Այս տեղը փոքր համարուելով, յետոյ պարտէզէն նոր մաս մ'աւելցուցին անոր վրայ, և այս առթիւ մուտքին ձախակողմը դրուեցաւ հետեւեալ արձանագրութիւնը. «Նորոզ շինեալ գերեզմանատուն միացաւ ընդ նախնոյն, արդեամբք եւ ձախիւք ազգային եկամտից, ի հոգաբարձութեան Վսեմ. Նուպար Փառայի, եւ վերակացութեամբ նորին գործակատարի»: — Այս գերեզմանավայրը կը մնայ այժմ անգործածելի, իբր երեսուն տարիներէ ի վեր. յարակից գործատան և շրջակայ շինութեանց պատճառաւ դժբախտաբար անխնամ վիճակի մէջ, տապանաքարերէն շատերը կոտորուած:

Երբ կառավարութենէն արգիլուեցաւ այլ եւս ննջեցեալ թաղել եկեղեցոյ այս բակին մէջ, նոր գերեզմանատուն մը կազմուեցաւ Պապը Շարգի թաղամարդի ընդհանուր գերեզմանավայրերու կարգին, 17000 մէթր տարածութեամբ հողաբաժնի մը վրայ, որ 1876-էն արդէն նուէր ստացուած էր Պետութեանէն, Մեսրոպ Եպս. Սուքիասեանի Առաջնորդութեան ատեն: Տարիներէ ի վեր այս է Աղեքսանդրիոյ Հայոց Ազգ. Հանգստարանը. պարսպապատ, ծառազարդ և դալարազեղ բացօդեայ